



**VEOLIA**  
Հոլի

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ



ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏ 2019



 **VEOLIA**  
Հոլի



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	15
1.3. Ջրահեռացման համակարգ .....	16
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	17
1.5. Էներգահամակարգ .....	18
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	20
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>22</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	23
2.2. Հասույթ .....	23
2.3. Գանձում .....	26
2.4. Դեբիտորական պարտքեր .....	26
2.5. Ջրաչափեր .....	28
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	29
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>30</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	31
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	33
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	35
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	36
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	37
<b>4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>40</b>
4.1. Համակարգչային ցանց .....	41
4.2. Ինտերակտիվ համակարգ .....	41
4.3. Նոր սարքավորումներ և ծրագրեր .....	41
<b>5. Լրատվական ծառայություն</b> .....	<b>42</b>
<b>6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>45</b>
6.1. Փաստաթղթերի մշակում .....	46
6.2. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն .....	46
6.3. Դասընթացներ /սեմինարներ .....	47
6.4. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ ...	47
6.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	48

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 1.1 ԶՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Լեոյի փողոց 7 հասցեում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում դիտահորում  $D=50$  մմ պողպատե խողովակի վրա հայտնաբերվել և գողման միջոցով վերացվել է գաղտնի վթար, ինչպես նաև  $L=1$  զժ/մ երկարության քայքայված հատվածը փոխարինվել է նոր խողովակով, տեղադրվել է  $D=50$  մմ փական: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ  $Q=2.0$  լ/վ ջրաքանակ:




● Աշխատանքներ են իրականացվել նաև Գր. Լուսավորիչ և Խորհրդարանի փողոցների խաչմերուկում, որտեղ  $D=25$  մմ ջրագծի խցափակման միջոցով վերացվել է վթար, արդյունքում խնայվել է մոտ  $Q=1.0$  լ/վ ջրաքանակ:

● Շիրակի փողոց 45/2 հասցեում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և խցափակվել է թվով 8 սպորինի միացում: Խցափակման միջոցով շահագործումից հանվել է տարածքով անցնող  $D=200$  մմ քայքայված ջրագծի  $L=122$  զժ/մ հատվածը:



● Հին ջրագծից միացումներն իրականացվել են Շիրակի փողոցով անցնող  $D=300$  մմ ջրագծից  $D=50$  մմ և  $D=20$  մմ պոլիէթիլենային խողովակներով՝  $L=40$  մ զժ/մ ընդհանուր երկարությամբ: Տարածքում գտնվող «Մետ-Մար» համալիրի ջրաչափական հանգույցը տեղափոխվել է տարածքից դուրս, և մոտ 20 օրվա ընթացքում  $220$  մ<sup>3</sup>-ի փոխարեն գրանցվել է  $850$  մ<sup>3</sup> ջրի ծախս: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=3.0$  լ/վ ջրաքանակ և գրանցվել է հասույթի աճ:



● Ջրաշեն 1-ին փողոցի D=100 մմ L=540 գծ/մ վթարային վիճակում գտնվող պողպատյա խողովակներն ամբողջովին քայքայված էին, ինչն էլ հանգեցնում էր հաճախակի վթարների, ջրակորուստի և հետագա շահագործման անհնարինությունը:

● Խնդրի կարգավորման, բնականոն ջրամատակարարման ապահովման և ջրագծի թողունակության բարձրացման համար «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են D=110 մմ L=540 գծ/մ պոլիէթիլենային խողովակներով:



● Հին ջրագծից սնվող թվով 70 բաժանորդների սահմանագատման կետերում տեղադրվել են նոր ջրաչափական դիտահորեր և ջրաչափեր: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

● Իսակով-Արգավանդ խաչմերուկում վթարված D=400 մմ պողպատե խողովակը փոխարինվել է նոր D=110 մմ L=20 գծ/մ պոլիէթիլենային ջրագծով, ինչը կնպաստի տեղի գաղտնի վթարների կրճատմանը:



Իսակով-Արգավանդ խաչմերուկի ջրամատակարարման սխեմա



● Կոմիտաս 7/4, Փափազյան 23 և Փափազյան 23/1 հասցեներում բակիչներն ահագանգել էին վթարների խնդրով: Մասնագետների արագ արձագանքման շնորհիվ այս հասցեներում պողպատե խողովակաշարերի վթարված հատվածները փոխարինվեցին համապատասխանաբար D=63 մմ L=18 գծ/մ, D=63 մմ L=17 գծ/մ և L=20 գծ/մ նոր պոլիէթիլենային ջրագծերով: Կատարված աշխատանքներից հետո տեղի ջրամատակարարումը վերականգնվեց և հնարավոր եղավ տնտեսել Q=0.3 լ/վ ջրաքանակ:

Կոմիտասի 7/4 հասցեի ջրամատակարարման սխեմա



Փափազյան փ. 23 և 23/1 հասցեի ջրամատակարարման սխեմա

## Քաղաք Սևան

● Շահումյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում  $D=20$  մմ խողովակի վրա հայտնաբերվել և  $D=20$  մմ փականի տեղադրման միջոցով կանխվել է գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է մոտ  $Q=2.0$  Լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Գյումրի

● Ղանդիլյան և Ա.Պետրոսյան փողոցների խաչմերուկում գործող ավտոտեխսպասարկման կետից ահագանգ էր ստացվել, որ տարածքում տեղի է ունեցել ջրագծի վթար: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ վթարի պատճառը հին, ամբողջովին քայքայված ջրագիծն էր, որը տարիներ առաջ կառուցված նոր ջրագիծը գործարկելուց հետո շահագործումից դուրս չէր բերվել:  $D=250$  մմ  $L=200$  գծ/մ խողովակը խցափակման միջոցով շահագործումից հանելու արդյունքում խնայվեց շուրջ  $Q=5$  Լ/վ ջրաքանակ:



Ա. Պետրոսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Խրիմյան Հայրիկ 5/5 հասցեում առկա ջրագծի վթարի ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ նշված տարածքով անցնող  $D=50$  մմ  $L=50$  գծմ քայքայված պողպատե ջրագծից որևէ բաժանորդ միացում չունեն, ուստի այն դուրս բերվեց շահագործումից: Իսկ Բարոնյան և Խր. Հայրիկ փողոցների խաչմերուկում արձանագրված խոշոր վթարն արձանագրվել էր  $D=250$  մմ ջրագծի վրա: Փորման աշխատանքներով պարզ դարձավ, որ այն ենթակա չէ վերանորոգման, ուստի որոշում կայացվեց նորով փոխարինել քայքայված հատվածը: Աշխատանքների բարեհաջող ավարտից հետո վերոնշյալ փողոցի և հարակից թաղամասերի անխափան ջրամատակարարումը կրկին վերականգնվեց:



Խրիմյան Հայրիկ փողոցի հարակից թաղամասի ջրամատակարարման սխեմա



Կաթի գործարանի ջրամատակարարման սխեմա

● Սախարովի հրապարակից սկիզբ առնող  $D=300$  մմ պողպատե խողովակը, որը քաղաքի հյուսիսային հատվածով անցնելով՝ սնուցում էր քաղաքի 224 և 225 տնակային տարածքները և ձգվում մինչև գ. Ախուրյանի ներկայումս չգործող Կաթի վերամշակման գործարան, Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրության ենթարկվեց: Արդյունքները փաստեցին, որ Կաթի գործարան գնացող խողովակաշարով անցնում էր շուրջ 45 Լ/վ ջրաքանակ, ուստի որոշում կայացվեց խողովակի այդ հատվածը դուրս հանել շահագործումից: Խցափակումը կատարվեց այնպիսի հատվածում, որ չխաթարվի 224 և 225 տնակային տարածքների ջրամատակարարումը: Աշխատանքների արդյունքում շահագործումից հանվեց  $D=300$  մմ  $L=5,160$  գծմ պողպատե խողովակ՝ խնայելով շուրջ  $Q=45$  Լ/վ ջրաքանակ:

● Մավոյան-Ռ.Դանիելյան փողոցների խաչմերուկով անցնող  $D=300$  մմ պողպատե ջրագծի վրա կատարված ուսումնասիրություններով հայտնաբերվել և իցափակման միջոցով շահագործումից հանվել է  $D=150$  մմ  $L=350$  մ պողպատե ջրագծի հատվածը, որը նախկինում կառուցված է եղել տեղի բանվորական ավանի համար, ինչը ներկայումս գոյություն չունի: Իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է 2-3լ/վ ջրաքանակ:



*Ռ. Դանիելյան փողոցի ջրամատակարարման սխեմա*

● Քաղաքի Ղանդիլյան 1 նրբ. և Մուշ-2 թաղամսի 9 փողոցին կից տարածքում ևս կատարվել են ուսումնասիրություններ և շահագործումից հանվել են համապատասխանաբար  $D=50$ մմ,  $L=75$ մ և  $D=50$ մմ,  $L=50$ մ պողպատե հին ջրագծերը, որոնց վրա այլևս որևէ բաժանորդի միացում առկա չէր:



*Ղանդիլյան 1 նրբ.-ի և Մուշ 2 թ.-ի ջրամատակարարման սխեմա*

### Քաղաք Վանաձոր



*Ներսիսյան 2 շենքի ջրամատակարարման սխեմա*

● Ներսիսյան 2 շենքից հաճախակի ահագանգ էր ստացվում առկա առաջացող վթարի խնդրով: Պարզվեց, որ կրկնվող վթարների արդյունքը հնամաշ խողովակն էր, որը կառուցվել էր դեռևս նախորդ դարի կեսերին: Այն ամբողջությամբ նորով փոխարինելու շնորհիվ բարելավվեց ցանցում ջրի ճնշումն ու խնայվեց  $Q=1.0$  լ/վ ջրաքանակ:

### Քաղաք Էջմիածին

● Դեռևս պայմանագրային առաջին տարվա ձմռանը «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինության «Էջմիածին» տեղամասը քաղաքի Մաշտոց փողոցում արձանագրել էր կոյուղատարի անբավարար աշխատանքը: Այստեղ ամեն անգամ տեղումներից հետո փողոցը ողողվում էր ջրով. պատճառներից մեկն այն էր, որ անձրևատարը միացված էր կոյուղուղատար ցանցին: Նախորդ տարիների փորձը հաշվի առնելով այս տարի ձնհալից հետո տնօրինության կողմից մեկնարկեցին տեղի կոյուղատարի պրոֆիլակտիկ մաքրման աշխատանքներ, որոնց շնորհիվ ցանցը առավելագույնս կմաքրվի նախորդ ամսիների աղտոտվածության նստվածքից և կնվազի քաղաքի այդ հատվածում «սեզոնային» ջրակույտերի առաջացման հավանականությունը:





## Քաղաք Սևան

● Սևան քաղաքի Նաիրյան փողոց 181 շենքում իրականացվել են ջրագծերի փոխարինման աշխատանքներ, շահագործումից հանվել են  $D=57-108$  մմ  $L=270$  գծ/մ երկարության քայքայված պողպատե խողովակներ և տեղադրվել են  $D=20-32$  մմ  $L=101.8$  գծ/մ երկարության պոլիէթիլենային խողովակներ: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=5.0$  լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Գավառ

● Սայաղյան փողոցում իրականացված վթարառորոնողական աշխատանքների և չափագրումների արդյունքում  $D=20$  մմ պոլիէթիլենային քայքայված ջրագծի  $L=10$  գծ/մ հատվածը փոխարինվել է նոր խողովակներով, որի արդյունքում խնայվել է մոտ  $Q=1.5$  լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Վարդենիս

● Կոմիտասի փողոցում իրականացված վթարառորոնողական աշխատանքների արդյունքում  $D=150$  մմ ջրագծի վրա հայտնաբերվել և ճեղքի գոդման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ  $Q=2$  լ/վ ջրաքանակ:


## Քաղաք Դիլիջան




● Տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից վթարառորոնողական աշխատանքներ իրականացնելիս քաղաքի Կաղնի Խաչ թաղամասը սնող  $D=200$  մմ ջրագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար:  $D=200$  մմ ջրագծի մոտ  $L=50$  գծ/մ երկարության հատվածը անցնում էր կամուրջի տակով՝ 4-6 մ թաղման խորությամբ, ինչը գրեթե անհնարին էր դարձնում իրականացնել վթարավերականգնողական աշխատանքները:

● Տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է  $D=160$  մմ  $L=150$  գծ/մ երկարության բարձր ճնշման նոր ջրագիծ՝ փականային հանգույցներով և ճնշման կարգավորիչներով: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=7$  լ/վ ջրաքանակ:

● Շահումյան փողոցով անցնող  $D=150$  մմ ջրագիծը գտնվում էր խիստ քայքայված վիճակում, առկա էր ջրակորուստ: Խնդրի կարգավորման նպատակով «Դիլիջան» տեղամասի աշխատակիցների կողմից վերոնշյալ փողոցում իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ: Կառուցվել են նոր  $D=100$  մմ  $L=10$  գծ/մ և  $D=150$  մմ  $L=120$  գծ/մ պոլիէթիլենային ջրագծեր, տեղադրվել են թվով 1  $D=50$  մմ ճնշման կարգավորիչ փական և թվով 4  $D=50$  մմ փական: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $D=150$  մմ  $L=2000$  գծ/մ քայքայված ջրագիծ, տնտեսվել է  $Q=7$  լ/վ ջրաքանակ:



● Կալինինի փողոցում կառուցվել է  $D=100$  մմ  $L=110$  գծ/մ պոլիէթիլենային ջրագիծ, տեղադրվել են թվով 2  $D=100$  մմ, թվով 1  $D=150$  մմ և  $D=80$  մմ փականներ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $D=200$  մմ  $L=280$  գծ/մ և  $D=250-300$  մմ  $L=280$  գծ/մ ջրագիծ, տնտեսվել է  $Q=5$  լ/վ ջրաքանակ:



### Քաղաք Մասիս



● Մասիս քաղաքի 5րդ թաղամասը սնող՝ Վեդու գործարանի կողմից արտադրված և ջրամատակարարման ստանդարտներին չհամապատասխանող պոլիէթիլենային ջրագծի  $D=63$  մմ  $L=300$  գծ/մ հատվածը գտնվում էր խիստ վթարային վիճակում և անցնում էր սեփական տնատիրությունների տակով: Ամբողջովին քայքայված խողովակների վրա հաճախակի տեղի ունեցող վթարները հնարավոր չէր վերացնել պատշաճ կերպով և ժամանակին, ինչպես նաև դրանց պատճառով առաջանում էին ջրակորուստներ, ջրագծերում ճնշման անկումներ և հետագա շահագործման անհնարինություն:

Խնդրի կարգավորման և բնականոն ջրամատակարարման ապահովման համար «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից Մասիս քաղաքի 5-րդ թաղամասի վթարային ջրագիծը փոխարինվել է  $D=63$  մմ  $L=323$  գծ/մ և  $D=40$  մմ  $L=20$  գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Աշխատանքների կատարման ընթացքում փոխարինվել են նաև հին ջրագծերից սնվող թվով 4 բաժանորդների անհատական միացումները: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է մոտ  $Q=1-1.5$  լ/վրկ ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:




### Քաղաք Արմավիր


● Զիվանի փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և  $D=150$  մմ պողպատե խողովակի ճեղքի գոդման միջոցով վերացվել է թվով 1 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ  $Q=2$  լ/վ ջրաքանակ:

## Արևշատ համայնք

● Բաղրամյան, Խաչատրյան և Սպանդարյան փողոցներում «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից խցափակվել և շահագործումից հանվել են  $D=110$  մմ  $L=850$  գծ/մ և  $D=63$  մմ  $L=250$  գծ/մ անմխիթար վիճակում գտնվող ջրագծերը: Նոր հետագծով կառուցվել են  $D=110$  մմ  $L=104$  գծ/մ,  $D=63$  մմ  $L=300$  գծ/մ և  $D=20$  մմ  $L=130$ գծ/մ երկարության պոլիէթիլենային ջրագծեր, տեղադրվել է թվով 30 ջրաչափական դիտահոր: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է  $Q=4$  լ/վ ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



## Լանջազատ համայնք



● Համայնքում կառուցվել է  $D=110$  մմ  $L=1600$  գծ/մ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ, տեղադրվել են թվով 17 ջրաչափական դիտահոր և ջրաչափ: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է  $Q=3$  լ/վ ջրաքանակ:

## Ալյափարս համայնք

● Համայնքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել էր 8 մթն ավելցուկային ճնշում, ինչը ջրակորստի և խողովակների վրա վթարների առաջացման պատճառ էր դառնում, այստեղից էլ բնականոն ընթացքով ջրամատակարարում ապահովելու հարցում էին դժվարություններ ծագում: Խնդրի լուծման նպատակով գյուղի սկզբնամասում Մաքրավան-Արծվյան ջրատարից սնվող ջրագծի վրա, տեղադրվեց ճնշման կարգավորիչ փական: Այժմ ցանցում ճնշումը կարգավորված է, իսկ գյուղացիներն էլ անխոչընդոտ ջրամատակարարում ունեն:



## Արգել համայնք

● Արգել համայնքի մի մասի ջրամատակարարումն ապահովելու համար գործարկվում էր տեղի պոմպակայանը: Այստեղ էներգախնայողության նպատակով կառուցվեց նոր ջրագիծ և այն միացվեց  $D=500$  մմ տրամագծով Քարաշամբի ջրատարից: Այս նոր  $D=110$  մմ  $L=110$  գծ/մ երկարության խողովակաշարը թույլ է տալիս գյուղը սնուցելու համար անհրաժեշտ ճնշումն ապահովել ցանցում արդեն առանց պոմպակայանի օգտագործման:

## Բենիամին համայնք


● Համայնքում խցափակման միջոցով շահագործումից հանվել է վթարված  $D=500$  մմ  $L=500$  գծ/մ պողպատե խողովակը, որի վրա բաժանորդների միացումներ չկային: Արդյունքում խնայվել է  $Q=1.5$  լ/վ ջրաքանակ և վերացել է գաղտնի վթարների առաջացման հավանականությունը:



Բենիամին գյուղի ջրամատակարարման սխեմա

## Փարաքար համայնք

● Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների և չափումների արդյունքում Փարաքար-Թաիրով համայնքներում առանձնացվել է մի թաղամաս՝ սեփական տների սեկտոր, որտեղ առկա էր ավելցուկային ճնշում: Նշված սեկտորի ջրամատակարարումն իրականացվում էր մեկ կետից, իսկ ճնշումը կարգավորվում էր այդ կետում տեղադրված փականի միջոցով:



Ցանցի այս տարածքում ավելցուկային ճնշումներից խուսափելու համար կիրառվում էր ճնշման կարգավորման ոչ արդյունավետ եղանակ՝ փականը սեղմելու միջոցով, ինչը հնարավորություն չի տալիս ապահովել կայուն և հաստատուն ճնշում: Ուսումնասիրության արդյունքում գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից ընտրված կետում ճնշման կարգավորիչ փականի տեղադրման անհրաժեշտությունն առաջացավ, քանի որ ճնշման կարգավորման արդյունքում փոքրանում են հոսակորուստների չափերը, վթարների առաջացման հավանականությունը, բարելավվում են սանիտարական սարքերի, ջրամատակարարման ցանցի շահագործման պայմանները և նվազում է ջրօգտագործումը: «Շահումյան» տեղամասի աշխատակիցների կողմից Թաիրով 3-րդ և 4-րդ շենքերի միջնամասում տեղադրվել է  $D=80$  մմ կարգավորիչ, կառուցվել նոր դիտահոր և փոխարինվել միացման կետի փականը: Կատարված աշխատանքների արդյունքում նշված տարածք մտնող  $Q=7$  լ/վրկ ջրաքանակը նվազել է  $Q=1.5$  լ/վրկ ջրաքանակով:

## Չովունի համայնք



Չովունի 9-րդ փողոցի ջրամատակարարման սխեմա

● Համայնքի 9-րդ փողոցում  $D=50$  մմ պողպատե խողովակի վթարված հատվածը փոխարինվել է նոր խողովակով: Արդյունքում նշված փողոցում բարձրացել է ջրի ճնշումը և կարգավորվել տեղի ջրամատակարարումը:

Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,442
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	29,060
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	16,140
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2,680
Ջրաչափական հանգույնցներ ուսուժաստիություն, սխեմաների կազմում	հատ	30
Շահագործումից հանված ջրագիծ	մ	7,110
Կառուցված ջրագիծ	մ	2,805
Կառուցված կոյուղագիծ	մ	74
Վերացված գաղտնի վթարներ	հատ	36
Փոխարինված փական	հատ	322
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	556
Մաքրված դիտահոր	հատ	3,718
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	38
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,486
Ջրահեռացման ցանցում	հատ	3,610
Պոմպակայաններում	հատ	176
Մաքրված անձրևընդունիչ	հատ	2,577

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	11	48	0
2	Զեյթուն	3	30	0
3	Մաշտոց	8	29	0
4	Շահումյան	3	44	0
5	Ալավերդի	6	29	0
6	Բերդ	8	5	0
7	Նոյեմբերյան	11	3	0
8	Իջևան	6	18	0
9	Ստեփանավան	2	29	0
10	Տաշիր	13	3	0
11	Ապարան	1	16	0
12	Լոռի	54	47	0
13	Շիրակ	82	76	0
14	Արթիկ	35	18	0
15	Սյուխակ	5	31	0
16	Թալին	3	-	0
17	Աշոցք	2	7	0
18	Էջմիածին	25	39	0
19	Աշտարակ	12	29	0
20	Հրազդան	7	18	0
21	Զարենցավան	6	14	0
22	Աբովյան	4	3	0
23	Կենտրոն	3	47	17
24	Հյուսիս	1	2	46
25	Հարավ	4	45	10
26	Էրեբունի	4	78	32
27	Արմավիր	2	58	18
28	Արտաշատ	52	31	67
29	Արարատ	25	25	24
30	Մասիս	33	24	62
31	Գավառ	4	19	34
32	Սևան	3	16	11
33	Մարտունի	1	10	9
34	Վարդենիս	0	9	6
35	Ճամբարակ	0	1	1
36	Դիլիջան	4	31	17
37	Վայք	2	2	19
38	Եղեգնաձոր	1	10	7
39	Զերմուկ	0	0	1
40	Սիսիան	5	35	15
41	Գորիս	1	15	10
42	Կապան	12	23	21
43	Մեղրի	4	1	9
	Ընդամենը	468	1018	436

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 1,922 վթարների 24 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 76 %-ը՝ մարզերին, ընդ որում

- Երևանում գրանցված 360 վթարների (ընդհանուրի 24 %) 10 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 90 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- մարզերում գրանցված 1,126 վթարների (ընդհանուրի 76 %) 39 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 61 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:



## 1.2. ՋՐԱԶԱՓԵՐԻ ՓՈՒՆԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ							Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	
Տեղադրված	222	14	8	5	2	2	0	253
Փոխարինված	170	15	3	3	1	2	1	195
Տեղափոխված	13	2	0	0	0	0	0	15
Տեխ. Ակտ	66	21	3	1	1	1	0	93
Ընդամենը	471	52	14	9	4	5	1	556

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-65 մմ տրամաչափի 556 ջրաչափ: Կատարված աշխատանքների 85 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ԶՐԱՋԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ


Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանույթների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	780	221	6
2	Մաշտոց	1,260	224	6
3	Շահումյան	1,475	160	12
4	Զեյթուն	410	72	5
5	Շիրակ	700	373	5
6	Ալավերդի	1,290	75	0
7	Ապարան	0	29	0
8	Արթիկ	0	66	0
9	Աշոցք	0	18	0
10	Բերդ	365	7	0
11	Իջևան	1,070	75	0
12	Լոռի	2,465	163	0
13	Նոյեմբերյան	0	28	0
14	Սպիտակ	500	25	0
15	Ստեփանավան	800	13	0
16	Թալին	0	14	0
17	Տաշիր	270	9	6
18	Էջմիածին	0	120	6
19	Չարենցավան	655	46	0
20	Արովյան	1,550	58	0
21	Հրազդան	2,490	108	6
22	Աշտարակ	1,530	16	0
23	Կենտրոն	330	292	0
24	Հյուսիս	20	210	12
25	Հարավ	0	339	6
26	Էրեբունի	0	204	4
27	Արմավիր	1,000	83	0
28	Արտաշատ	235	70	0
29	Արարատ	150	58	0
30	Մասիս	230	46	0
31	Գավառ	680	41	0
32	Սևան	40	51	0
33	Մարտունի	0	17	0
34	Վարդենիս	0	10	0
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	150	32	0
37	Վայք	80	16	0
38	Եղեգնաձոր	140	13	0
39	Ջերմուկ	0	28	0
40	Սիսիան	0	85	0
41	Գորիս	0	22	0
42	Կապան	0	47	0
43	Մեղրի	340	33	0
	Ընդամենը	21,005	3,633	74

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 24 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 76 %-ը՝ մարզերին:





#### 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Վարդենիս ԿՄԿ-ի մանր ճաղավանդակի մեջ մետաղական ցանց էր ընկել և խափանել սարքավորման աշխատանքը: Աշխատակիցների կողմից ցանցը մաքրվել է աղբից, կարգաբերվել է խախտված քերիչ սանրը, ինչի արդյունքում սարքերն աշխատում են բնականոն ռեժիմով: Նոր լեդ լուսարձակներով են փոխարինվել նաև այրված արտաքին լուսարձակները:

- Սևանի N3 ԿՊ –ում փոխարինվել է այրված թողարկիչը:

- Մարտունի ԿՄԿ-ի խոշոր մասնիկների ճաղավանդակի աշխատանքը վերականգնվել է, մանր ճաղավանդակի քերիչ սանրը խափանվել էր, որն էլ վերականգնվեց: Նոր լեդ լուսարձակներով են փոխարինվել այրված արտաքին լուսարձակները:


- Գավառ ԿՄԿ-ի խոշոր ճաղավանդակի քերիչ սանրը պոկվել էր շղթաներից: Աշխատակիցների կողմից փոխարինվել են շղթաները, ստուգվել են բոլոր ռեդուկտորների և շարժիչների աշխատանքները, ինչի արդյունքում սարքերը աշխատում են բնականոն ռեժիմով:



Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ: Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:

Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Գառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	72,769	30.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	73,457	14.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	215,350	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	151,099	9.5
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	119,965	18
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	22,604	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8,494	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	12,100	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	36,100	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0



## 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳ


Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Կոմիտասի 38/1	պոմպի աշխատանքի կարգավորում
2	Փափազյան 16/2	պոմպի աշխատանքի կարգավորում
3	գ.Մերձավան	էլ. սարքերի զննում և կարգավորում
4	Կոմիտասի 4 - 9	պոմպի աշխատանքի կարգավորում
5	Մամիկոնյանց 62Ձ	պոմպի աշխատանքի կարգավորում
6	Գրիբոյեդովի 2,4Ձ2	պոմպի աշխատանքի կարգավորում
7	Հ.Էմին 80Ձ	պոմպի աշխատանքի կարգավորում
8	Վրացական 6	պոմպի աշխատանքի կարգավորում
9	Արաբկիր 25 փ.,	պոմպի աշխատանքի կարգավորում
10	Արաբկիր 21փ 1 - 42	պոմպի աշխատանքի կարգավորում
11	Երզնկյան 1 - 7	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ավտոմատիկայի կառավարիչ, բարձր ճնշման ռելեի փոխարինում, եռաֆազ թողարկչի տեղադրում, մեմբրանի տեղադրում, բաքի միացման դետալներ, փականի տեղադրում
12	Օրբելի 8 - 46	պոմպի աշխատանքի կարգավորում
13	Քանաքեռ ՀԷԿ Պ/Կ	պոմպի աշխատանքի կարգավորում
14	մ.Արագածոտն գ.Ագարակի պ/կ	պոմպի աշխատանքի կարգավորում
15	Կիևյան 4/4 - 26	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, առանցքակալի տեղադրում, եռաֆազ թողարկչի փոխարինում, էլ. շարժիչի և պոմպի կենտրոնաբերում
16	մ.Կոտայք գ.Սոլակ	պոմպի ապամոնտաժում, պոմպի տեղադրում
17	Քանաքեռ ՀԷԿ	էլ. սարքերի զննում և կարգավորում
18	Հալաբյան 9/1	փականի տեղադրում
19	Վ. Համբարձումյան 8/1 - 47(47Ձ)	պոմպի աշխատանքի կարգավորում
20	Օրբելի 18 - 1	փականի տեղադրում, պոմպի աշխատանքի կարգավորում
21	Ջիվանի 11/1 - 40	պոմպի աշխատանքի կարգավորում
22	Մամիկոնյանց 23/1 - 53	պոմպի աշխատանքի կարգավորում
23	Ա.Ավետիսյան 80	պոմպի աշխատանքի կարգավորում
24	Լենինգրադյան 48/2 - 58Բ	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ավտոմատիկայի կառավարիչ, եռաֆազ թողարկչի փոխարինում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
25	Շիրանարներ 6/1-65	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող պոմպի աշխատանքի կարգավորում
26	Մամիկոնյանց 36/4	պոմպի աշխատանքի կարգավորում
27	Մամիկոնյանց 40	պոմպի աշխատանքի կարգավորում
28	Ադոնցի 17 - 23	պոմպի աշխատանքի կարգավորում
29	Օհանովի 40	պոմպի աշխատանքի կարգավորում
30	Կոմիտասի 50 - 10	պոմպի աշխատանքի կարգավորում
31	Հր. Քոչարի 13 - 55	պոմպի աշխատանքի կարգավորում
32	Լենինգրադյան 48/2 - 1	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
33	Ֆրիկի 2,4	էլ. սարքերի զննում և կարգավորում
34	Մարյան 24	պոմպի աշխատանքի կարգավորում
35	Փափազյան 11	պոմպի աշխատանքի կարգավորում
36	Համբարձումյան 18	պոմպի աշխատանքի կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
37	Դավթաշեն ներքին ՕԿՁ	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ավտոմատիկայի կառավարիչ
38	Համբարձումյան 97	պոմպի աշխատանքի կարգավորում
39	Մամիկոնյանց 23/1 - 56	ջրագծերում ճնշման չափում և կարգավորում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում, Ֆազի բացակայության ռելե, թողարկիչի տեղադրում
40	Ծերենց 5	էլ. սարքերի զննում և կարգավորում
41	ԱՅթաղ. 262	պոմպի աշխատանքի կարգավորում
42	Ջիվանի 11/1	պոմպի աշխատանքի կարգավորում
43	Լենինգրադյան 48/2	պոմպի աշխատանքի կարգավորում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
44	ք.Աբովյան Գեղարդի 5	էլ. սարքերի զննում և կարգավորում
45	ք.Էջմիածին Չարենցի 1	էլ. սարքերի զննում և կարգավորում
46	Կումիտասի 36/7 - 10	պոմպի աշխատանքի կարգավորում
47	Աղբյուր Սերոբի 11/1,11/3 - 57	բարձր ճնշման ռելեի փոխարինում, ցածր ճնշման ռելեի փոխարինում
48	Արծրունի 902	էլ. սարքերի զննում և կարգավորում
49	Կումիտաս 38/12	էլ. սարքերի զննում և կարգավորում
50	Արդույան 292	էլ. սարքերի զննում և կարգավորում
51	Փափազյան 2-րդ նրբ. Կովկասյան ՕԿՁ	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, բաքի միացման դետալներ
52	Վ. Վաղարշյանի 3 - 50	պոմպի աշխատանքի կարգավորում
53	Օհանովի 40	պոմպի աշխատանքի կարգավորում
54	Ք. Եղվարդ պոմպակայանում	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, պոմպի աշխատանքի կարգավորում
55	Ք. Եղվարդ Սումգայիթ թաղ. 4-րդ փող.	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, առանցքակալի տեղադրում, պոմպի վերանորոգում
56	Հալաբյանի 38 - 1(Մարգարյան 7)	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, փականի տեղադրում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
57	Վրացական 4նրբ 72	պոմպի աշխատանքի կարգավորում
58	Էմին 822	պոմպի աշխատանքի կարգավորում
59	Լենինգրադյան 48/2	պոմպի աշխատանքի կարգավորում
60	Մամիկոնյանց 27 - 74	էլ. սարքերի զննում և կարգավորում
61	Կումիտասի 50 - 36	պոմպի աշխատանքի կարգավորում
62	Ռուբինյանց 24	պոմպի աշխատանքի կարգավորում
63	դ. Դեմիրճյանի 17/1 - 52	էլ. սարքերի զննում և կարգավորում
64	Վրացական 4նրբ 72	պոմպի աշխատանքի կարգավորում
65	Գյուլբենկյան 34/1	պոմպի աշխատանքի կարգավորում
66	Գյուլբենկյան 29/1	պոմպի աշխատանքի կարգավորում
67	Կումիտասի 7/3 - 31	պոմպի աշխատանքի կարգավորում
68	Վ. Վաղարշյանի 24/1 - 61	պոմպի աշխատանքի կարգավորում
69	Սոսեի 2-րդ նրբ. 82ենք	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, վերանորոգման հավաքածուի տեղադրում/ջերմային ռելեի տեղադրում
70	Ահարոնյան 18	ցածր ճնշման ռելեի փոխարինում, թողարկիչի տեղադրում, բարձր ճնշման ռելեի փոխարինում
71	Քանաթեռ ՀԷԿ	պոմպի աշխատանքի կարգավորում
72	Հակոբյան 7	պոմպի աշխատանքի կարգավորում
73	Շինարարների 15ա	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ցածր ճնշման ռելեի փոխարինում, Ֆազի բացակայության ռելե, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
74	Սունդուկյանի 15/4 - 16	փականի տեղադրում, խցուկի տեղադրում, թողարկիչի տեղադրում, ցածր ճնշման ռելեի փոխարինում
75	Սարկավազի 72	պոմպի աշխատանքի կարգավորում
76	Թբիլիսյան խճ. 35	պոմպի աշխատանքի կարգավորում
77	Վ. Վաղարշյանի 24/1 - 33	պոմպի աշխատանքի կարգավորում
78	Գյուլբենկյանի 43 - 76	պոմպի աշխատանքի կարգավորում
79	Բարբյուս 632	պոմպի աշխատանքի կարգավորում
80	Հակոբյան 122	պոմպի աշխատանքի կարգավորում
81	Ն.Դուման 532	պոմպի աշխատանքի կարգավորում
82	Մամիկոնյանց 49 - 34	ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
83	Ահարոնյանի 18 - 36	պոմպի աշխատանքի կարգավորում
84	Ավետ Ավետիսյանի 70 - 128	պոմպի աշխատանքի կարգավորում
85	Ավետ Ավետիսյանի 80	պոմպի աշխատանքի կարգավորում
86	Գյուլբենկյանի 19/1	պոմպի աշխատանքի կարգավորում
87	Դրոյի 14/1	պոմպի աշխատանքի կարգավորում
88	Ահարոնյան 5	պոմպի աշխատանքի կարգավորում
89	Ավետ Ավետիսյանի 70 - 125	թողարկիչի տեղադրում, ցածր ճնշման ռելեի փոխարինում
90	Կումիտասի 50 - 36	պոմպի աշխատանքի կարգավորում


h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
91	Մամիկոնյանց 36/5 (Ադոնց 17/1)	պոմպի աշխատանքի կարգավորում
92	Վահր. Փափազյանի 11 - 39	պոմպի աշխատանքի կարգավորում
93	Ավետիսյան 80	ավտոմատիկայի կառավարիչ, եռաֆազ թողարկչի տեղադրում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից
94	Ահարոնյանի 18	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից, առանցքակալի տեղադրում, վերանորոգման հավաքածուի տեղադրում
95	ք.Աբովյան Գեղարդի 5	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՄՊԸ կողմից, ցածր ճնշման ռելեի փոխարինում, Ֆազի բացակայության ռելե
96	Տիչինայի 34 - 49	պոմպի աշխատանքի կարգավորում
97	Շինարարների 10/1ա	պոմպի աշխատանքի կարգավորում
98	Վրացական 4-րդ նրբ. 72	պոմպի աշխատանքի կարգավորում
99	Վրացական 6 - 56	եռաֆազ թողարկչի տեղադրում, փականի տեղադրում
100	Թբիլիսյան խճ. 35/1	պոմպի աշխատանքի կարգավորում
101	Թբիլիսյան խճ. 3	պոմպի աշխատանքի կարգավորում
102	գ.Ջովունի	էլ. սարքերի գնում և կարգավորում
103	Դ. Դեմիրճյանի Ի 36 - 13	էլ. սարքերի գնում և կարգավորում, պոմպի աշխատանքի կարգավորում
104	Դ. Դեմիրճյան 27	պոմպի աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի գնում և կարգավորում
105	Կոնդ 5 թաղ	էլ. սարքերի գնում և կարգավորում, պոմպի աշխատանքի կարգավորում
106	Պարոնյան 28	պոմպի աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի գնում և կարգավորում
107	Ա. Խաչատրյանի 1 - 27	պոմպի աշխատանքի կարգավորում
108	Մանթաշյան 4/3	Վնասված մալուխի նորոգում
109	Արարատյան 5	էլ. սնուցման մալուխի նորոգում
110	Բեռնակիրներ 85ա	Արտաքին լուսավորության կարգավորում
111	Ջորաղբյուր ՕԿՁ	Պոմպի ապամոնտաժում և տեղափոխում, մոնտաժում, օգտագործվել է՝ 1) 3գծ/մ d=100մմ խողովակ, 2) d=150մմ 2 հատ կցաշուրթ, 3) հեղուսմաննեկ, 4) հաղորդալար-պղնձե 2*4մմ 40 գծ/մ, 5) d=100մմ ծունկ 2 հատ, աշխատանքները կատարվել են էլ. եռակցումով
112	Նարեկացի 41	32A եռաֆազ ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ
113	Խարբերդ պ/կ	Հոսքաչափի վթարված էլ. սնուցման կարգավորում
114	Ծիծեռնակաբերդ ՕԿՁ	Ջրամբարի արտաքին լուսավորության կարգավորում
115	Նուբարաշեն գազալցակայանի մոտ	Պոմպի և շարժիչի կենտրոնաբերում
116	Մանթաշյան 28ա	Կատարվել է պոմպակայանը սնող էլ. մալուխի փոխարինում՝ այլումինե 4x6մմ մալուխով 50գ/ծմ, փոխարինվել է d=50մմ գոծի թվով 1հատ, ինչպես նաև փոխարինվել է փական գնդիկավոր d=25մմ թվով 1հատ
117	Ազատամարտիկների 72	Պոմպակայանը սնող մալուխի փոխարինում 4x 6մմ այլումինե մալուխով 30գծ/մ
118	Աթոյան 8	1. d=50մմ մալուխի փականի փոխարինում թվով 1հատ, 2. d=50մմ բրոնզե ֆիլտրի գոծի փոխարինում, 3. d=50մմ ճկուն միացման փոխարինում, նշված աշխատանքները կատարվել են էլ. եռակցումով



## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԿԱՆԵՐ

Մարտին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել և պատրաստվել են հետագա շահագործման համար:

Ընդհանուր առմամբ աշխատանքներ են կատարվել ավելի քան 100 մեքենա-մեխանիզմի վրա՝ տարբեր ընթացային մասերի փոխարինում նորերով, շարժիչի նորոգում, առջևի և հետևի համակարգերի նորոգում, և այլն: Փոխարինվել են շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ և անտիֆրիզ, ինչպես նաև անվադողեր և մարտկոցներ:



Կատարված աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելու խնդրի լուծմանը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել է 184, իսկ ՄՏՍՏ-ում՝ 130 պայմանագրային աշխատակից: 01.04.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 271,335, իսկ ՄՏՍՏ-ում՝ 189,286 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. մարտ ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	334,693	260,571	77.9
		Իրավաբանական անձ	15,659	10,764	68.7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	257,044	185,183	72.0
		Իրավաբանական անձ	10,142	7,059	69.6
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	591,737	445,754	75.3
		Իրավաբանական անձ	25,801	17,823	69.1

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները մարտ ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	398,534	301,957	75.8
		Իրավաբանական անձ	20,339	14,084	69.2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	314,883	192,210	61.0
		Իրավաբանական անձ	12,222	7,929	64.9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	713,417	494,167	69.3
		Իրավաբանական անձ	32,561	22,013	67.6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 400 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 280 նոր բաժանորդ: 2019թ. ապրիլի 1-ից, համաձայն ընկերության նոր կառուցվածքի, ՄՏՍՏ սպասարկման տարածքից ԵՏՍՏ սպասարկման տարածք են տեղափոխվել Էջմիածին, Մասիս, Աբովյան և Ապարան տեղամասերը՝ մոտ 65,000 բաժանորդով:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգավիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է սպորինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 3,804, իսկ ՄՏՍՏ-ում՝ 2,555 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2,191	1,219	197	3,607
		Իրավաբանական անձ	94	95	8	197
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	1,068	1,096	262	2,426
		Իրավաբանական անձ	60	47	21	128
	Ընդամենը		3,413	2,457	488	6,358

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 310,062 մ<sup>3</sup> վերահաշվարկված հատույթ (66 %` Երևան և 34 %` մարզեր):


Ստորև` գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)





Հասույթ (Մարզեր)




Մարտին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ³	Փաստացի հազ.մ³	Տարբերություն %, հազ.մ³
Երևան Մարզեր	6,061	6,240	2.95
Ընդամենը	9,291	9,394	1.11

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մարտ ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1,203,214 մլն դրամ (71 %), իսկ ՄՏՍՏ-ում՝ 492,553 մլն դրամ (29 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,111,564	1,068,993	1,023,278
	Հավաքագրում/մլն դրամ	961,127	1,066,773	1,207,447
	%	86	100	118
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	485,310	528,579	519,889
	Հավաքագրում/մլն դրամ	394,761	428,304	489,054
	%	81	81	94%
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,596,874	1,597,572	1,543,167
	Հավաքագրում/մլն դրամ	1,355,888	1,495,077	1,696,502
	%	85	94	110

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Մարտ ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 145 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 17.34 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 81 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 3.9 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2019 թ. մարտը ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3,460	527,302,295	2,655	221,769,199	65	5,699,282	3,455	769,740,661	1,318	106,983,379

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 77 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.04.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հասույթ (մլնՄ դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3,028.49	1,056.85
Բնակիչ-բաժանորդներ	2,012.62	652.17
Իրավաբանական անձեր	1,015.88	404.68
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,146.56	547.87
Բնակիչ-բաժանորդներ	1,698.93	403.30
Իրավաբանական անձեր	447.63	144.57
Ընդամենը, այդ թվում	5,175.05	1,604.72
Բնակիչ-բաժանորդներ	3,711.55	1,055.47
Իրավաբանական անձեր	1,463.50	549.25

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՍ սպասարկման տարածքում 01.04.2019թ. դրությամբ շուրջ 207.6 մլն դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով և մեկ բաժանորդի՝ ջրաչափով ծախսի պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը և Կոնդի Առանձնատների Տնտեսություն ՊՈԱԿ-ը:

ՄՏՍՍ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.04.2019թ. դրությամբ կազմում է մոտ 80 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, Ոստիկանություն, ԱԲՆ և այլն), որը կվճարվի մարտ ամսից սկսած:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ԶՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	389,623	300,677	77,2	19,818	14,079	71
	Առանց ջրաչափի	8,911	1,280	14,4	521	5	1,0
Մարզեր	Ջրաչափով	286,507	190,324	66,4	11,845	7,911	66,8
	Առանց ջրաչափի	28,376	1,886	6,6	377	18	4,8
Ընդամենը	Ջրաչափով	676,130	491,001	72,6	31,663	21,990	69,5
	Առանց ջրաչափի	37,287	3,166	8,5	898	23	2,6

Տվյալների բազայում 01.04.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	515,407	275,595	53,5	22,514	4,890	21,7
Մարզեր	333,444	84,792	25,4	13,989	2,360	16,9
Ընդամենը	848,851	360,387	42,5	36,503	7,250	19,9

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,085, իսկ մարզերում՝ 2,482 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 54, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 442 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2187	1124	51.4
գ.Պռոշյան	1514	537	35.5
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	4541	160	3.5

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Մարտ ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 4,857, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2,254, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 203, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 143, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 192, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 256 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 236 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ


Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	147	84,114	14,833,015
Մարզեր	171	52,314	8,769,718
Ընդամենը	318	136,428	23,602,733

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.3 %, որը 0.1 %-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:





Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 66 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լրգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 17-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լրգերների գրաֆիկները. (նկարներում պատկերված ուղղահայաց կարմիր գիծը ցույց է տալիս իրավիճակն աշխատանքներից առաջ և հետո):










### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 232 կՎտ/ժ. (0.05%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքր յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:


Ստորև ներկայացված են մարտ ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Գայդար 47 (8/1, 10, 12)	հավելագրում	994
Արշակունյաց 50	հավելագրում	2,544
Լուսակերտ նոր պոմպ	հավելագրում	2,305
Արցախի 14/18	Վթարի վերացում	1,600
Արցախի 10/1	Վթարի վերացում	1,300
Պուշկին 3	Ճնշման ռելեի կարգաբերում	500
Մարգարյան 7	Հետադարձ փականի խնդիր	500
Բաղրամյան 25	Լարանցում	2,500
Ընդամենը		12,243

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 65 հասցե: Երեք հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները թերությունները վերացնելու նպատակով, իսկ երկու հասցեում ապամոնտաժվել են լարանցումներ, որոնց հետագիծը հնարավոր չէ պարզել:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 7,687 կՎտ/ժ կամ 26 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

**Էջմիածին**




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 9,414 կՎտ/ժ կամ 28 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

**Շիրակ**




● Մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 25,629 կՎտ/ժամ կամ 4 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 133,938 կՎտ/ժամ կամ 7% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 54,958 կՎտ/ժ կամ 1% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Ընկերության կողմից սպառած էլ. էներգիա*



**3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

- Տեղամասերի սպասարկման տարածքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների շրջանակներում քարտեզագրել են ջրագծերի և կոյուղագծերի երկարությունները:
- Ստեղծվել են թեմատիկ քարտեզներ ՀՀ մարզերում տեղադրված լոգերների և լոգեր գոտիների թվով 358 գյուղերի և 280 քաղաքների համար:
- Կատարվել են տվյալների բազայի թարմացումներ Երևան քաղաքի ջրագծերի և փակաների վերաբերյալ:
- Կատարվել է ընկերության կողմից սպասարկվող տարածքներում տեղակայված բաժանորդների տեղադիրքների ճշտում:
- Ավարտվել են ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքները՝ ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի:
- Կատարվել է ընկերության ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- Կատարվում է Երևան քաղաքի պոմպերի շերտի թարմացում և բազայի ուղղում, ինչպես նաև ստուգվում է յուրաքանչյուր պոմպին միացված շենքերի մասին տեղեկատվությունը:
- Կատարվել է հոսքաչափերի շերտի թարմացում և նոր բազայի ստեղծում:
- «Մեծ Մարտնի» ՄՊԸ-ի նախկինում կատարած աշխատանքների տվյալների հիման վրա կատարվել է նախկին «Հայջրուղկոյուղու» սպասարկման տարածքի ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում ճիշտ աշխարհագրական դիրքով՝ GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:
- Տրվել են պլանային և վթարային ջրանջատումներ:

- Թարմացվել է Լոգեր գոտիների տվյալների բազան՝ ելնելով տեղադրված լոգերների վերաբերյալ ստացված տեղեկատվությունից:
- Թարմացվել է ՀՀ-ում տեղակայված պոմպակայանների վերաբերյալ տվյալների բազան:

### 3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա փնագորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:




Ստորև ներկայացվում է տեղեկատվություն 2 խոշոր վթարի մասին:

● Մալաթիա-Սեբաստիա վարչական տարածքում գտնվող Բաֆֆի փողոցում տեղադրված ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ ուղղությամբ հոսող ջրաքանակը կտրուկ նվազել է՝ հասնելով 0-ի: Այդ մասին օրվա կարգավարը հայտնել է Շահումյան ՇՏ-ի պետին, ում կողմից պարզվել է, որ Բաֆֆի փողոցի ջրատարով հոսող ջրի ճնշումը կարգավորող կարգավորիչը խափանվել է և ամբողջությամբ փակվել: Հայտարարվել է վթարային ջրանջատում, որից հետո վերանորոգվել է կարգավորիչը: Կարգավորիչի վերանորոգումից հետո վերականգնվել է ջրամատակարարումը:

Ստորև ներկայացված է Բաֆֆի փողոցի ջրատարի ջրաքանակը ֆիքսող ծախսաչափի գրաֆիկական պատկերը, որտեղ ստույգ երևում է, թե երբ է ջրաքանակը նվազել և երբ է վերականգնվել:


«Բաֆֆի»



● Ստեփանավան քաղաքում գտնվող «Օքսֆամ» ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ ՕԿՁ-ից դուրս եկող ջրատարի վրա վթար է առաջացել: Երբ «Օքսֆամ» պոմպակայանից պոմպը «Նովոսելցովո» ջրատարի ջուրը վերամղում է դեպի «Օքսֆամ» ՕԿՁ, ՕԿՁ-ի լցվածության նիշը ցերեկային ժամերին նվազում է 30սմ-ով, իսկ գիշերվա ընթացքում՝ բարձրանում 20սմ: Վթարի հայտնաբերման ժամանակ ՕԿՁ-ի լցվածության նիշը նվազում էր: Այդ մասին տեղեկացվել է «Ստեփանավան» ՇՏ-ի աշխատակիցներին: Նրանց կողմից պարզվել է վթարի ստույգ վայրը, ապա այն վերացվել է ՇՏ-ի աշխատակիցների կողմից: Դրանից հետո ՕԿՁ-ի լցվածության նիշը կրկին սկսել է աճել:

Ստորև ներկայացված է «Օքսֆամ» ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը.

«Օքսֆամ» ՕԿՁ



3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՏԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստեփանավան

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մի շարք վթարահայտնաբերման և ջրատար համակարգի օպտիմալացման աշխատանքներ: Ամենաուշագրավը Ստեփանավան քաղաքի ջրամատակարարման բարելավումն էր, որտեղ բացի ջրամատակարարումն ամբողջությամբ 24-ժամյա դարձնելուց, նաև ջրարտադրությունը նվազեցվել է 10 %-ով (25 լ/վ), իսկ ջրարտադրության վրա էլ. էներգիայի ծախսը նվազեցվել է 35 %-ով կամ 21,000 կԿտ/ամիս: Ուսումնասիրվել է նաև Գետավան պ/կ-ից դեպի գյուղեր (Ագարակ, Յաղոբան, Կողես) ջրատարը: Արդյունքում պարզվել է, որ ջրատարում գոյություն ունեն վթարներ գումարային  $Q \approx 25$  լ/վ:



Արգել



Արգել գյուղի ուսումնասիրությունների արդյունքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ▶ հայտնաբերվել է վթար  $Q=1$  լ/վ,
- ▶ շահագործումից հանվել է  $d=80$  մմ տրամագծով ջրագիծ, որի արտահոսքը կազմում էր  $Q=1.3$  լ/վ: Այն խցափակվել է:
- ▶ Գյուղի վերջնամասում գտնվող  $d=500$  մմ տրամագծով ջրթող փականի արտահոսքը կազմում էր  $Q=2$  լ/վ: Այն խցափակվել է:

Կատարված աշխատանքների արդյունքում ունեցել ենք  $Q=4.5$  լ/վ տնտեսում, ինչպես նաև ավելացել է ներքին ցանցի ճնշումը: Հայտնաբերվել են նաև թերություններ, որոնց վերացման դեպքում կունենանք ևս 3 լ/վ տնտեսում:

## Արարատյան

● Պլանային աշխատանքներով պայմանավորված՝ գործարկվել է Արարատյան պ/կ-ն, որի ընթացքում ուսումնասիրվել է Արարատյան 1 ջրատարը: Այն գտնվում է շատ անմխիթար վիճակում: Չափումներով պ/կ-ից մինչև օդանավակայանի ջրթող փական, որի ընթացքում պ/կ-ում զարգանում է 6 մթն. ճնշում, ջրի արտահոսքը կազմել է 200լ/վ:



## Նոյեմբերյան



● Ուսումնասիրվել է նաև Լոռի-Բերդ համակարգի Ալավերդի-Նոյեմբերյան հատվածը, որի վերջին կետը Զորական գյուղն է: Գյուղի միացման մոտ ջրատարի վրա, կատարվել են չափումներ: Դեպի Նոյեմբերյան գոյություն ունեցող ջրատարի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համապատասխան աշխատանքներ կատարելուց հետո հնարավոր է Նոյեմբերյան քաղաքի ջրամատակարարումն ապահովել Լոռի-Բերդ համակարգից:

## Աշտարակ

● Ուսումնասիրվել է Կարբի խորքային հորերից դեպի Աշտարակ ջրատարը d=250մմ, որի մեջ եղած թիթեղյա արգելքը հեռացվել է:



## Գառնի



● Գառնի կատարած շրջայցի ժամանակ հայտնաբերվել են վթարներ Գառնի-Երևան մոտ 5լ/վ և Գառնի-Արտաշատ 1լ/վ ջրատարների վրա:

## Արզնի

● Կարգավարման ծառայությունից ստացված ահագանգից ելնելով հայտնաբերվել է վթար գազի հորեր տարածքում Արզնի 2 ջրատարի վրա 130լ/վ: Արագ կազմակերպվել է ջրատարի կանգառ՝ վթարը վերացնելու նպատակով:


Կանգառի ընթացքում կատարվել են չափումներ Արզնի 1 ջրատարի վրա և հայտնաբերվել գաղտնի վթար  $Q \approx 190$ լ/վ: Հայտարարված ջրանջատման արդյունքում այդ վթարը ևս ժամանակավոր կանխվել է:



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**







### 4.1. Համակարգչային ցանց

Մարտ ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Տեղադրվել և կարգավորվել են երկու նոր դոմենի կառավարման (Domain Controller) սերվերներ Microsoft Windows Server 2016 օպերացիոն համակարգի հիման վրա:
- Սկսվել է դոմենի տեղափոխումը Microsoft Windows Server 2012 օպերացիոն համակարգից Microsoft Windows Server 2016 օպերացիոն համակարգ՝ տեղափոխվել են բոլոր դերերը, DNS ծառայությունները և այլ ծառայությունները:
- Մեկնարկվել է սերվերային սենյակի և այդ սենյակում առկա սարքավորումների պատրաստումը նոր սերվերի և տվյալների պահոցի տեղադրման և կարգավորման համար:

### 4.2 Ինտերակտիվ համակարգ


- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության և մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում և ստեղծվում է տվյալների բազա ջրամատակարարման շարունակականությունը հաշվարկելու համար:
- Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի հետ կնքված նոր կարգի համապատասխան, կատարվել է ամբողջական ծրագրային փոփոխություն, որով հնարավորություն է ընձեռվում ջրաչափերի լաբորատոր եզրակացությունները ստանալ և հաշվարկել նոր հաստատված կարգով:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել Ջրային կոմիտեին, ՀԾԿՀ և ընկերության այլ ստորաբաժանումներին:

### 4.3. Նոր սարքավորումներ և ծրագրեր

- Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար ձեռք են բերվել թվով 15 նորագույն բազմաֆունկցիոնալ սարքեր:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Մարտին շարունակվել է համակարգում ընթացող աշխատանքների ներկայացումը հանրությանը՝ ընդհանուր առմամբ ավելի քան 10 հրապարակում, որը ընկերության ֆեյսբուքյան էջի ու մեզ հետ համագործակցող ԶԼՄ-ների ընթերցողներին հնարավորություն է տվել պատկերացում կազմել Վեոլիա Ջրի ամենօրյա գործունեության մասին:



Ընդ որում, Հանրային կապերի բաժինը (ՀԿԲ) փորձել է այդ ըստ էության միօրինակ հաղորդագրությունները միաժամանակ դարձնել հետաքրքիր և՛ շարադրանքի առումով և՛ տեխնիկական մանրամասների առումով, որպեսզի սպառողը պատկերացում կազմի այն դժվարությունների մասին, որոնք հանդիպում են վթարների վերացման կամ ջրագծերի ու դիտահորերի կառուցման, հոսակորուստների վերացման ժամանակ:



Ընթացիկ գործերից բացի, հաշվետու ժամանակաշրջանում լուսաբանվել են նաև այլ միջոցառումներ, որոնցից թերևս կարելի է առանձնացնել ամենամյա գարնանային աշխատանքները՝ հեղեղատար համակարգը անձրևային սեզոնին նախապատրաստելու ուղղությամբ, Վեոլիա ջրի մասնակցությունը մարտի 23-ի համապետական շաբաթօրյակին՝ Երևանում ու մարզերում, որը լուսաբանվեց ոչ միայն ֆեյսբուքյան էջում, այլև 22, Կենտրոն հեռուստաալիքներով, իսկ մամուլի հաղորդագրությունը տրամադրվեց ԶԼՄ-ներին:

Մարտ ամիսը հազեցած էր իրադարձություններով, որոնք հնարավորինս լուսաբանվել են և հանրությանը ներկայացվել: Այսպես, Կանանց միջազգային օրվա առթիվ, մարտի 8-ին տնօրինության անունից հավուր պատշաճի շնորհավորական ուղերձ է հղվել համակարգի աշխատակիցներին: Իսկ Մարտի 22-ին Ծաղկաձորում կայացած ընկերության ղեկավար կազմի 3-րդ աշխատաժողովի ժամանակ հիշեցվել է Ջրի համաշխարհային օրվա մասին, ասվել է, որ ընթացիկ տարվա կարգախոսն է «Չանտեսելով և ոչ մեկին», ինչպես նաև կոչ է արվել ընկերության աշխատակիցներին՝ հավատարին մնալ այս կարգախոսին ու լիարժեք կատարել իրենց պարտականությունները: Մարտի 22-ին նաև ֆեյսբուքյան էջում է հրապարակում ապահովվել տոնի կապակցությամբ, դրան կցելով ԱՊՀ երկրների ՄԻՌ հեռուստաալիքի ռեպորտաժը երևանյան ջրի որակի մասին: Հարկ է նշել նաև ՀԿԲ-ի մասնակցությունը վերը նշված միջոցառմանը: Դրա համար պատրաստվել էր 2 տեսաֆիլմ, որտեղ նախ խոսվում էր 2018թ. մարտին կայացած նմանօրինակ աշխատաժողովի մասին, այնուհետև ներկայացվում էին 2018թ. ձեռքբերումները:



Ի վերջո խոսքը Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա մասին է, որը նշվեց մարտի 20-ին: Այդ առթիվ ընթերցողներին նաև հիշեցվել է, որ այս կազմակերպության 17-րդ գագաթնաժողովը տեղի ունեցավ 2018թ. հոկտեմբերին Երևանում:

22 նախագահ Արմեն Սարգսյանի կողմից «Վեոլիա Ջուր» նախագծի տնօրեն Մալիկա Գենդուրիին ընդունելու փաստն անկախ ամեն ինչից նաև կոչված էր վկայելու Ֆրանսիա-Հայաստան խորացող կապերի մասին: Ելնելով փաստի կարևորությունից, դրա վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը լուսանկարներով, ինչպես նաև համապատասխան տեսանյութը նույն օրը հրապարակվեցին ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև ուղարկվեցին համակարգի

աշխատակիցներին ու ԶԼՄ-ներին:

Տարվող ակտիվ աշխատանքների շնորհիվ մեր ֆեյսբուքյան էջի ընթերցողների քանակը մարտին հատեց 15,000-ի սահմանը, ինչը զգալի առաջընթաց է: Դրա հետագա առաջխաղացման համար սկսվել է այնտեղ բնության, շրջակա միջավայրի ու ջրի վերաբերյալ հրապարակումներ ապահովել այլ աղբյուրներից բավարարելու համար ընթերցողների հետաքրքրասիրությունը: Մասնավորապես խոսքը 2 տեսանյութով կիսվելու մասին է՝ Եվրանյուզից՝ կապված ջրի կարևորության, դրա օգտագործման մշակույթի, այստեղ առկա բարդությունների ու խնդիրների հետ:



Այս ընթացքում նաև որոշակի ակտիվացավ ընկերության Twitter-յան էջը: Ի մասնավորի այնտեղ հրապարակվել է Արմեն Սարգսյան - Մալիկա Գենդուրի հանդիպման մասին պատմող հաղորդագրությունը՝ անգլերեն ու տեսանյութերը, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի մասին պատմող հաղորդագրությունը՝ ֆրանսերեն ու տեսահոլովակը:

Հաշվետու ժամանակահատվածում նաև շարունակվել է սպասարկվել Վեոլիա Ջրի պաշտոնական [veolia.am](http://veolia.am) կայքը, որտեղ հրապարակված նյութերը պարբերաբար խմբագրվել են ու թարմացվել, ինչպես նաև ընկերության էջը [youtube](http://youtube.com)-ում: Մահմանված կարգով ու ժամկետներում հրապարակվել են ջրամատակարարման ընդհատումների մասին մամուլի հաղորդագրություններ, ինչպես նաև այլ բնույթի հայտարարություններ:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





### 6.1 Փաստաթղթերի մշակում

● Շառայությունը մշակեց և Ընկերության Խորհրդի նիստին (“Board Meeting”) ներկայացրեց որակի, առողջության և անվտանգության կառավարման մասով «2018 թվականի և հունվար-փետրվար 2019 թվականի» վերլուծական հաշվետվությունը:

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի պահանջներով և էլևելով 2019թ. ընթացքում Ընկերության արտադրական վտանգավոր օբյեկտներ (ԱՎՕ) շահագործող անձնակազմերի մասնագիտական որակավորման դասընթացի և գիտելիքների ստուգման (այսուհետ՝ դասընթաց) Հավատարմագրված մարմնի կողմից կազմակերպման անհրաժեշտությունից՝ ՈԱԱ Շառայությունը լրամշակեց քլորակայաններ, ամբարձիչ մեխանիզմներ, կաթսայատներ և ԱՎՕ հանդիսացող այլ օբյեկտներ շահագործողների համար նախատեսվող դասընթացների տեխնիկական առաջադրանքները և համապատասխան հայտ ներկայացրեց գնումների վարչություն:

● Ղեկավարվելով ՀՀ կառավարության 21-րդ ապրիլի 2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով՝ ՈԱԱ Շառայությունը մշակեց Ընկերության քլորի անոթների տեխնիկական վկայագրման/ճնշափորձարկման աշխատանքների տեխնիկական առաջադրանքները և համապատասխան հայտ ներկայացրեց գնումների վարչություն:

● Ղեկավարվելով ՀՀ կառավարության 28-րդ սեպտեմբերի 2005 թվականի N 2388-Ն որոշմամբ հաստատված «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգի» 132-րդ կետի և «Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում որպես շարժիչային վառելիք օգտագործելու համար սեղմված բնական գազի բարձր ճնշման բալոններ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ - ՀՍՏ 279-2007» ստանդարտի պահանջներով՝ ՈԱԱ Շառայությունը մշակեց Ընկերության ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրված գազաբալոնների պարբերական վկայագրման աշխատանքների տեխնիկական առաջադրանքները և համապատասխան հայտ ներկայացրեց գնումների վարչություն:

● Շառայությունը, Վեոլիա ընկերության Առողջության և անվտանգության կանխարգելման տնօրինության հրահանգով, մեկնարկեց «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2019» միջոցառման նախապատրաստական աշխատանքները՝ լրամշակելով «Իմ ներդրումը վաղվա համար» միջազգային ստեղծագործական մրցույթին՝ Ընկերության աշխատակիցների և վերջիններիս երեխաների մասնակցության ուղեցույցի հայերեն տարբերակը:

### 6.2 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն

● «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետի պահանջներից էլևելով՝ հաշվետու ամսվա ընթացքում, համագործակցելով «Դավի տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների հետ, իրականացրեց Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 26 արտադրական վտանգավոր օբյեկտի (20 ամբարձիչ սարքավորում, 2 քլորակայան, 4 կաթսայատուն) փորձաքննության աշխատանքներ, որոնց արդյունքում ԱՎՕ-ների հետագա շահագործման համար տրամադրվեցին դրական եզրակացություններ:

### 6.3. Դասընթացներ/սեմինարներ

● Հաշվետու ամսում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում շարունակվեցին Ընկերության ԵՏՍՏ Տնօրինության 39 մասնագետ տեսուչի և «Արևելք» ու «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունների ինժեներա-տեխնիկական անձնակազմի 35 աշխատակիցների մասնագիտական որակավորման դասընթացները: Դասընթացների նպատակն է բարձարցնել Ընկերության վերոնշյալ մասնագիտությունների աշխատակիցների կատարողականության մակարդակը, ամրապնդել վերջիններիս շրջանում անվտանգության մշակույթը:

Դասընթացների մասնակիցներն ուսուցանվում են համապատասխանաբար «Հաղորդակցման հմտություններ», «ՁՄՕԿ-ի կանոնների պահանջներ», «Ինտերակտիվ համակարգից օգտվելու հմտություններ», «Առաջին օգնություն», «ՋնՋ ցանցերի շահագործում» «Անվտանգության ապահովումը աշխատանքային պարտականությունները կատարելիս» թեմաներով:



● Ծառայությունը Ընկերության գլխավոր տնօրենի Ժ/պ պրն. Գ. Գրիգորյանի 07/03/2019թ, 1177Ս հրամանի հիման վրա մարտի 14-20-ը ընկած ժամանակահատվածում Ջրի որակի վարչության հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 26 ինժեներների և 7 լաբորատորիայի վարիչների համար «Խմելու ջրի որակի հսկողությանը ներկայացվող պահանջներ» թեմայով դասընթացներ քաղաք Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Վայքում և Սևանում:



### 6.4. Համագործակցություն ՀՀ ԱԻՆ նախարարության հետ

● ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության կողմից մարտի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում ՈԱԱ ծառայության համակարգում «Արևմուտք ՏՏ» «Արաբկիր» տեղամասի շահագործման թիմը մասնակցեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում անցկացված «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը:

● Ուսումնավարժության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը, ինչպես նաև կատարելագործել գործնական հմտությունները:

● ՈԱԱ ծառայության աշխատակից Գագիկ Զաքարյանը մարտի 29-ին մասնակցեց Երևանի քաղաքապետարանի և Արտակարգ իրավիճակների նախարարության համատեղ կազմակերպած «Երևան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժությանը:



## 6.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին պլանավորված Անվտանգության ստուգայցներ Տեխնիկական տնօրինության թվով 2 քլորակայանում («Արեգնադեմ», «Վրադ Բադ») և մեկ ՕԿՋ-ում՝ «Հովունու ՕԿՋ»: Կատարված ստուգայցների արդյունքները գրանցվեցին հատուկ ստուգաթերթիկներում:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադրնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am

